Արձանագրություն N 9

ՀՀՊԵԿ-ՀԲՄԽԾՁԲ-24/3 ծածկագրով հրատապ բաց մրցույթի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08 նոյեմբերի 2024թ.
ժամը 15:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Լ. Նալբանդյանը
անդամներ՝ Լ. Ալավերդյանը, Ա. Ավետիսյանը, Ս. Պատուրյանը
քարտուղար՝ Ա. Ասատրյանը

Հանձնաժողովի անդամ Գ. Գալստյանը բացակայում էր նիստից:

I. Գնման գործընթացի հետագա ընթացքի ապահովման վերաբերյալ

(Լ. Նալբանդյան)

1. Գնահատող հանձնաժողովի նախագահ Լ. Նալբանդյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/3 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «ԼուիՍոֆտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Դիմում-հայտարարությունը և Գնային առաջարկը (Հավելված 2) ստորագրված է միայն «ԼուիՍոֆտ» ՍՊԸ-ի կողմից, մինչդեռ հրավերով սահմանվում է, որ Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից: Միաժամանակ նշեմ, որ հանձնաժողովին մինչ այս գնահատումը շփոթության մեջ էր դրել Կոնսորցիումի պայմանագրով սահմանված 3. 2, 3. 3 կետերով նախատեսված պայմանները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

(Լ. Նալբանդյան)

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև գնման գործընթացի հետագա ընթացքի ապահովումը գնումների օրենսդրության համապատասխանեցնելու հանգամանքը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Գրավոր դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ պարզաբանման կարգով դիրքորոշում ստանալու, արդյոք «ԼուիՍոֆտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը բավարարում է հրավերի պահանջներին:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարությանից գրավոր դիրքորոշում ստանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ. Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Է. Նալբանդյան

անդամներ՝ _____ Է. Ալավերդյան

_____ Ա. Ավետիսյան

_____ Ս. Պատուրյան

քարտուղար՝

_____ Ա. Ասատրյան